


ՄԵՂՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

6Գյուղական համայնք	
Մեղրաշեն	
 40°40'33" հս. լ. 43°56'55" ավ. ե.	
Երկիր	 Հայաստան
Մարզ	Շիրակի
Խոսվող լեզուներ	հայերեն
Բնակչություն	1500'մարդ (2012թ)
Ազգային կազմ	հայեր
Ժամային գոտի	UTC+4
Հեռախոսային կոդ	+374 244'





Երկար տարիների անձնանվեր և փաստացի կատարված աշխատանքները լիարժեք առիթ են ստեղծում ասելու այն, որ «ասվածը արված է»: 20 տարիների ընթացքում ամեն վարկյան ազգաբնակչության խնդիրներով և հոգսերով ապրելը, յուրաքանչյուր բնակչի խոսքը լսելի դարձնել և յուրաքանչյուր կատարվելիք աշխատանքի համախմբված կատարում այսօր դարձել է տեսանելի և ստացել իր բացառիկ գնահատականը: Ստացված և գնահատված աշխատանքն է, որ առաջացնում է ոգևորություն, նոր մտքերի հղում և ավելի ինչ հասնելու ձգտում, այս միտումով է հավաքագրվում յուրաքանչյուր խնդիր և տրվում դրանց ակնհայտ լուծումներ: Մակայն այս ամենի հետ մեկտեղ ակտիվ զարգացող աշխարհի շեմին անհրաժեշտ է ամենօրյա լրջագույն աշխատանք, իրազեկվածություն և իմաստություն համայնքում առակա խնդիրները հաղթահարելու համար:

Ուստի հնգամյա ծրագիրը հանդիսանալու է յուրաքանչյուրիս համար հինգ տարիների ընթացքում որպես աշխատանքային ուղեցույց:

Մեղրաշենի գյուղական համայնքի ղեկավար Հունան Պետրոսյան

Ներածություն

Հնգամյա զարգացման ծրագիրը լրամշակվել է 2012-2016թվականների համար կազմված քառամյա ծրագրի հիման վրա : Վերջինս ենթարկվել է վերընտիր համայնքապետի, նորընտիր ավագանու անդամների և համայնքի բնակչության մանրամասն քնարկմանը: Առանձնացվել են կատարված աշխատանքները և տրվել գնահատական: Առանձնացվել են նաև չկատարվածները և տրվել վերլուծություն առաջացած խոչընդոտների վերաբերյալ և նորացված հաշվարկներով զետեղվել հնգամյա զարգացման ծրագրում (**այսուհետ ՀՀԶԾ**): Ծրագրի կազմման հիմքում ընկած է նաև 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի՝ ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից, ինչպես նաև մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունն» և նույն կազմակերպության կողմից 2016 թվականին «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման» ուղեցույցի¹ մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը: ՀՀԶԾ-ն իրենից ներկայացնում է համայնքի ընդհանուր նկարագրության և ուսումնասիրման , այդ ուսումնասիրությունից ելնելով սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծության , վերլուծության արդյունքում ի հայտ եկած հիմնախնդիրների բացահայտման, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման և զարգացման նպատակով կատարվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ , որը նախատեսվում է առաջիկա հինգ տարիների ընթացքում համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը: Համայնքի զարգացման , բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով առաջիկա հինգ տարիներին հնգամյա ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ: Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական,

¹ Ուղեցույցը մշակվել է ԳՄՀՀ-ի ֆինանսավորմամբ ՀՖՄ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում

տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որի նպատակն է ընտրված ռազմավարությամբ բացահայտված հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացում: Ծրագրի մշակման անհրաժեշտությունը ծագել է այն ակնհայտ իրականությունից, որ այսօրվա արագ փոփոխվող աշխարհում ցանկացած ռազմավարական ծրագրի արդյունավետ իրագործումը ենթադրում է նաև ժամանակ առ ժամանակ դրա վերանայում ու ճշգրտում, համապատասխանեցում արդիական պահանջներին ու նոր մարտահրավերներին: Ծրագիրը ներառում է կայուն արագ տեմպերով տնտեսական աճի ապահովում, նպատակային սոցիալական քաղաքականությունը և տեղական ինքնակառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումը: Միաժամանակ կընդլայնվեն այն ոլորտները, որոնք ներառված են հիմնական ռազմավարական գերակայություններում, իսկ նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով կընդլայնվեն նաև տնտեսական տնտեսական աճի ապահովման քաղաքականության միջոցառումները: Արդյունքում Կայուն զարգացման ծրագիրը զգալիորեն կընդարձակի ընդգրկման շրջանակները՝ ըստ էության, հանդիսանալով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր: Նախորդ արդյունքները ամփոփելիս նկատելի է մի շարք ուղղությունների դրական տեղաշարժ: Զգալի չափով աղքատության կրճատումը, բնակչության բարեկեցության աճի, աղքատության հաղթահարումը՝ ներառյալ ծայրահեղ աղքատության վերացումը և ներկայիս անհամաչափությունների հետագա աճի զսպումը կշարունակեն մնալ Կայուն զարգացման ծրագրի ուշադրության կենտրոնում: Ծրագիրը մշակելիս հնարավորինս մանրամասնություններով ուսումնասիրվել, քննարկվել և վերլուծություններ են կատարվել համայնքի զարգացմանը նպաստող ինչպես նաև այդ զարգացմանը խոչընդոտ հանդիսացող բոլոր բնագավառները և ճյուղերը:

Համայնքապետի, համայնքի ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի ակտիվ շփումը ազգաբնակչության հետ հնարավորություն է ստեղծում մշտապես իրազեկ լինել համայնքի խնդիրներին, որը խտան է հանդիսանում լրջագույն խնդիրներին ճշգրիտ լուծումներ տալուն:

ՀՀԶԾ-ն կազմված է բաժիններից, ենթաբաժիններից, առանձնացված ցուցանիշներ պարունակող աղյուսակներից, սխեմաներից և ցուցանիշների աճի և նվազման նկարագիրը տվող դիագրամաներից:

- **1-ին բաժնում** տեղ են գտել համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը և որպես ներածություն տրվել է պարզաբանում ՀՀԶԾ –ի կազմման անհրաժեշտության վերաբերյալ, որը առաջիկա հինգ տարիների ընթացքում դառնալու է համայնքի զարգացմանը միտված ծրագրերի արդյունավետ, նպատակային և պլանավորված աշխատանքների կատարման ուղեցույց:
- **2-րդ բաժնում** և ենթաբաժիններում համառոտակի տրվել է ճանաչողական տեղեկատվություն՝ համայնքի անցաց պատմական ուղու, զբաղեցրած աշխարհագրական դիրքի, սոցիալ-տնտեսական վիճակի, զարգացման նպաստ բերած իրականացված ծրագրերի

- ֆինանսական իրավիճակի նկարագրության և կանխատեսումների , համայնքի ուժեղ և թույլ կողմերի , զարգացման փուլերի վերաբերյալ:
- **3-րդ բաժնում** տրվել է հստակ սահմանում համայնքի առջիկա հինգ տարիներին զարգացման տեսլականի ,կատարվելիք նպատակների և նպատակների իրականացման քայլերի և պլանավորման վերաբերյալ:
 - **4-րդ բաժնում** անդրադարձ է կատարվել համայնքի ֆինանսատնտեսագիտական բնագավառին, կատարվել վերլուծություն նախորդ տարիների և կանխատեսվել առաջիկա հինգ տարիների ֆինանսական վիճակը և սնման աղբյուրները:
 - **5-րդ բաժնում** կատարվել ՀՀԶԾ մոնիթորինգ:

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ըդհանուր նկարագիր, պատմական ակնարկ

Արագած լեռան հյուսիսային ստորոտում, ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա, Լենինական-Պեմզաշեն երկաթուղու ճյուղավորության ձախակողմյան հարթավայրում տարածված բնակավայրերից է Հյուրասեր, Ղազանչի այժմ՝ Մեղրաշեն գյուղը:Նախկին Ղազանչին Մեղրաշեն է վերանվանվել 31.05.1946թ: Մեղրաշենը գտնվում է Արթիկ քաղաքից 7 կմ , մարզկենտրոնից (Գյումրի քաղաք)

20 կմ և մայրաքաղաքից (Երևան քաղաք) 100 կմ հեռավորության վրա, սահմանակից է Մուսայելյան, Ջրառատ, Արևիկ, Այգաբաց, Վարդաքար և Փանիկ գյուղերին:

Ձմռան տևողությունը մոտ 6 ամիս է , գարունը ցուրտ , ամառը կարճատև, համեմատաբար լավ է աշունը: Տարեկան տեղումների քանակը կազմում է 450-

700 մմ: Ագրոկլիմայական շրջանացմամբ՝ կլիման չափավոր ցուրտ է, թույլ արտահայտված խոնավությամբ :

Գյուղը հիմնադրվել է 1828-1829թթ ,ազգաբնակչության հիմնական մասը տեղափոխվել է պատմական Հայաստանի Բասենից և Կարսից, իրենց հետ բերելով շատ գեղեցիկ ավանդույթներ և սովորույթներ , որոնք արդիական են բոլոր ժամանակների համար:

Մեղրաշենը մարզի եզակի համայնքներից է իր աշխատանքային գործունեությամբ, որի արդյունքում կառավարության կողմից 2007թվականին արժանացել է <<Լավագույն համայնք>> կոչմանը,ինչպես նաև համայնքի ղեկավար Հունան Պետրոսյանը իր երկար տարիների անձնվիրաբար համայնքին ծառայելու, համայնքի և տարածաշրջանի վստահությունը շահելու ինչպես նաև կատարած աշխատանքների առիթով 2014 թվականին արժանացել է <<Համագգային վստահություն, տարվա լավագույն համայնքի ղեկավար>> կոչմանը:

Համայնքը ակտիվ մասնակցություն է ունեցել Երկրորդ համաշխարային պատերազմին, Արցախյան ազատամարտին: Համայնքի բյուջեի միջոցներով գյուղում տեղադրվել է խաչքար-հուշարձան նվիրված Արցախյան ազատամարտին զոհվածների հիշատակին: Պահպանվել են գյուղի նոր ժամանակների անշուք եկեղեցին, շրջակայքում՝ Չավալու, Մանասի խարաբեք, Աբրահամի խարաբա գյուղատեղիներ, խաչքարեր, դամբարաններ, գերեզմանոցներ, որոնք կարող են գրավել զբոսաշրջիկների և հնեագետների ուշադրությունը:

Գյուղում առկա բնակչությունը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ 1305 մարդ է՝ տղամարդ 668, կանայք 637, ժամանակավոր բացակայողների թիվը կազմում է 65 ժամանակավոր հաշվառվածների թիվը՝ 35 մարդ, գրանցվել է 17 ծնունդ և 13 մահ: Հիմնական բակիչները հայեր են 1496 մարդ, 3 ռուս, 1 եզդի:

Ստորև ներկայացվում է Մեղրաշեն գյուղական համայնքի ժողովրդագրության բնութագիրն ըստ կարևորագույն ցուցանիշների (տես աղյուսակ 1) :

**Աղյուսակ 1: Մեղրաշեն համայնքի ժողովրդագրության վերաբերյալ ցուցանիշներ
01.01.2016 թվականի դրությամբ**

<i>Հ/հ</i>	<i>Ցուցանիշները</i>	<i>Ընդամենը</i>
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1305
	Տղամարդիկ	668
	Կանայք	637
	0-4 տարեկան	84
	5-6 տարեկան	31
	7-10 տարեկան	54
	11-14 տարեկան	51
	15-17 տարեկան	54
	18-22 տարեկան	107
	23-45 տարեկան	501
	46-62 տարեկան	323
	63 և բարձր տարիքի	107
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	165
	Տարիքային և աշխատանքային	114
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	5
5.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	16
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	67
	Մանկուց հաշմանդամներ	16
9.	Աշխատունակներ	1024
10.	Զբաղվածներ	834
11.	Գործազուրկներ	120

13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	57
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	2
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	4
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	4
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	65
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	120

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքը աչքի է ընկնում կրթական բարձր մակարդակով: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուսանողության թիվը կազմում է 130 մարդ: Գործում է մեկ միջնակարգ դպրոց, նախատեսված է չորս հարյուր աշակերտների համար, սակայն այժմ ունի վերանորոգման կարիք, անհրաժեշտ է նոր գույք: Դպրոց են հաճախում 149 աշակերտ, աշխատում են 37 մարդ: Դպրոցում գործում է նաև Նախակրթարան հաճախում են 33 երեխա և աշխատում են 3 դաստիարակ, ներկայացված է **Աղյուսակ - 2**

Աղյուսակ -2: Մեղրաշեն համայնքում գործող միջնակարգ դպրոցի և նախակրթարանի վերաբերյալ ցուցանիշներ 01.01.2016 թվականի դրությամբ

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Դպրոցներում աշխատողների թիվը, որից՝	37
	Մանկավարժներ	27
2.	Աշակերտների թիվը	149
3.	Նախակրթարան՝	36
4.	դաստիարակ	3
5.	Երեխաների թիվ	33

Համայնքի բյուջեի մասնակի ներդրումներով կազմակերպվում են տարբեր էքսկուրսիաներ՝ Հայաստանի տեսարժան վայրեր դեռ մանկուց հայրենիքը ճանաչելու և նրա հանդեպ երեխաների մեջ սեր սերմանելու նպատակով:

Համայնքում գործում է նաև Արվեստի դպրոց ՀՈԱԿ-ը, ուսուցանվում են՝ դաշնամուր, դուդուկ, քանոն, նկարչություն, պար: Դպրոցը գործում է առանձին մասնաշենքով նախատեսված 100 աշակերտի համար: Մասնաշենքը ունի վերանորոգման, ջեռուցման, ինչպես նաև նոր գույքով համալրման կարիք: Նարկայումս հաճախում են 30 աշակերտ (համաձայն ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 8 նիստով ուսման վարձավճար է սահմանվել 2000 դրամ): Վերանորոգման և համապատասխան գործիքներով համալրման դեպքում կնկատվեն աշակերտների թվի աճ: Համայնքի բյուջեի միջոցներով

սաները մասնակցում են տարբեր մրցույթների: Կազմակերպվում են համերգներ, ցուցահանդեսներ:

Գործում է գրադարանը իր հարուստ գրքային պաշարով: Գրադարանը գործում է կուլտուրայի տանը , որը կառուցվել է 1950 ական թվականներին , այժմ գտնվում խարխուլ վիճակում և ունի վերակառուցման կարիք ինչը հանդիսանում է համայնքի կարևորագույն խնդիրներից մեկը:

Համայնքի բյուջեի միջոցներով 2010 թվականին բարեկարգվել ,կանաչապատվել և ցանկապատվել է գյուղի կենտրոնական մասը: Տնկվել է եղեննի և 450 թուփ վարդեր,տեղադրվել են զրուցարաններ , որտեղ տարվա տաք եղանակներին իրենց հանգիստն են կազմակերպում համայնքի բնակչությունը, իսկ ձմռան ամիսներին հանգիստը կազմակերպվում է կուլտուրայի տան առանձնասենյակում, որի ջեռուցումը կատարվում է գյուղապետարանի միջոցներով:Կազմակերպվում են նարդու, շախմատի մրցույթներ: Այժմ արդեն մասնակիորեն կառուցվել է սպորտհրապարակը՝ 2016թվականի տեղական բյուջեի միջոցներով առանձնացվել և կառուցվել է ցանկապատ , իսկ հաջորդ աշխատանքները կավարտվեն 2017թվականին: Համայնքում մշտապես կազմակերպվում են գեղեցիկ միջոցառումներ՝ մարտի 8, մայիսի 9 , ամանորյա և այլն, որին ակտիվ մասնակցում են դպրոցի աշակերտները, արվեստի դպրոցի սաները, համայնքի բնակիչները: Ամանորին համայնքի բյուջեի միջոցներով զարդարվում է ամբողջ գյուղը, որի աշխատանքներին ակտիվ մասնակցում են համայնքի բնակիչները:

Համայնքում գործում է եկեղեցին , որտեղ անցկացվում են քրիստոնեական բոլոր ծիսակատարությունները, մատուցվում են պատարագներ: Կարելի է հպարտությամբ արձանագրել նաև այն փաստը, որ համայնքում ոչ մի տեսակի աղանդներ չկան: Սակայն եկեղեցին շատ հին է և ունի վերակառուցման կարիք :

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Մեղրաշեն համայնքի կենտրոնում: Շենքի ընդհանուր վիճակը լավ է,հիմնովին նորոգված , անցկացված է լոկալ ջեռուցման համակարգ ,աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքը նորացված, հագեցած է ժամանակակից աշխատանքային տեխնիկայով: Համայնքապետարանի ամենամեծ սենյակը (դահլիճ)վերջերս վերանորոգվել և կահավորվել է նոր գույքով: Այն ծառայում է որպես քաղաքացիների սպասարկման , ժողովների կազմակերպման , լայնամասշտաբ սեմինարների անցկացման , նիստերի սենյակ:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ,հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի նիստով:Աշխատակազմերի կառուցվածքը ներկայացված է **սխեմ 1-ում** ,իսկ թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը **աղյուսակ 3-ում, աղյուսակ 4-ում**

Աղյուսակ 3: Համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը


Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով անձնակազմը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
	Համայնքի ղեկավար	1	1	180000
	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	100000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	105000
	Գլխավոր մասնագետ (2.3-1)	1	1	100000
	Գլխավոր մասնագետ (2.3-4)	1	1	100000
	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	1	95000
	1-րդ կարգի մասնագետ (3.2-2)	1	1	95000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
	Գրադարանավար	0,5	1	36500
	Մշակույթի տան աշխատող	0,5	1	36500
	Վարորդ	1	1	79000
	Հավաքարար	0,75	1	54750
	սպահակ	1		73000
	տնտեսավար	0,5		39000
	Ընդամենը	11,25	13	10937500

**Աղյուսակ 4: Արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի աշխատակազմի թվաքանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	1	85000	85000
2.	Հաշվապահ	0,71	1	73000	51830
3.	Քանոնահար	0,62	1	77000	47730
4.	Դաշնակահար	0,91	1	73000	66400
5.	Դաշնակահար	0,92	1	73000	67080
6.	Բակապահ	0,62	1	77000	45260
7.	հավաքարար	0,6	1	73000	43800
	Ընդամենը	5,38	7	527000	407100

Մ Խ Ե Մ Ա
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Միևնա 1



Մեղրաշեն համայնքի տարեկան բյուջեն կազմում է 38000000դրամ , 30%-ը ստացվում է սեփական եկամուտների հաշվին: Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը բերված է **աղյուսակ 4-ում**:
 Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով Ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան. բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի. գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի. դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում. ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:
--

Ց Ա Ն Կ

Աղյուսակ 5:ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔ

Հ/Հ	Գույքի տեսակ	Չափման միավոր	Քանակ	Վիճակը
1	Գյուղապետարանի շենք	հատ	1	բ
2	Մշակույթի տուն	հատ	1	ե
3	Արվեստի դպրոցի շենք	հատ	1	գ
4	Երկաթբետոնե կամուրջ	հատ	2	գ
5	Երկաթ գծի կառամատույց	հատ	1	գ
6	Ներքին լուսավորության ցանց	Հատ լամպ	213	բ
7	Ոռոգման ջրի ներքին ցանց	կմ	5.5	գ
8	Ճանապարհային ցանց ասֆալտապատ	կմ	2.9	դ
9	Ճանապարհային ցանց գրունտային	կմ	13	դ
10	Գերեզմանոց	հատ	1	բ
11	Հակակարկտային կայաններ	հատ	5	բ

Զբաղվածության մակարդակը միջինից բարձր է, համայնքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածների թիվը կազմում է 934 մարդ, այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 570 մարդ, այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 188 մարդ, շուրջ 120 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի:

Համայնքում առկա են փոքր և միջին ձեռնարկատիրություններ, ուսումնական հաստատություններ և այլ կառույցներ: Չկան գործող պետական արդյունաբերական ձեռնարկություններ, որտեղ ազգաբնակչությունը կունենա հիմնական աշխատանք, հացի խնդիրը լուծում են սեփականատերերի մոտ ունեցած սակավ աշխատանքով և ֆինանսական միջոցներով:

Համայնքում գործում են սեփական սննդի առևտրի 4 կետեր, գործում է ալրադաց, եվրո դուռ

պատուհանների արտադրամաս: Ընտանեկան նպաստների համակարգում գրառնցված ընտանիքների թիվը կազմում 57:

Համայնքը աչքի է ընկնում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվածների մեծ քանակով: Համայնքում տարեց տարի զարգանում է կարտոֆիլի արտադրությունը, ինչպես նաև Մղրաշենցուն բնութագրիչ ավանդական ճյուղը՝ մեղվաբուծությունը: Համայնքը դասվում է գյուղատնտեսական մթերքներ արտադրող գյուղերի շարքին: Համայնքի վարչական տարածքը 1588.08հա է, որից 1406.13 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, այդ թվում վարելահողեր՝ 966.13 հա, արոտավայրեր՝ 105.11 հա, այլ հողատարածքներ՝ 334.89 հա: Մեղրաշեն համայնքի հողային ֆոնդի բաշխումը բերված է **աղյուսակ N 6-ում**: Ցանկատարածությունների՝ ըստ մշակվող կուլտուրաների **աղյուսակ N8-ում**, անասնապահության՝ ըստ պահվող անասունների տեսակների ստացված արդյունքների վերլուծությունները և կանխատեսումները բերված են **աղյուսակ N7-ում**:

Համայնքում հողագործությունը իրականացվում է անհատական տնտեսությունների միջոցով, սեփականաշնորհված և վարձակալված հողամասերում: Վարելահողերի մեծ մասը օգտագործվում են ցորենի, գարու, կարտոֆիլ, ճակնդեղի արտադրության նպատակով և գրեթե ամբողջ հողեր չկան: Գյուղատնտեսության ոլորտում նկատվում է լուրջ առաջընթացներ: Այսօր գյուղացու համար խնդիր չի հանդիսանում սերմացուի, դիզ վառելիքի, թունաքիմիկատների ձեռք բերումը, քանի որ կառավարության աջակցությամբ ձեռք է բերվում մատչելի գներով: Սակայն խնդիր է արտադրված մթերքի սպառման շուկան: Չեն գործում հիմնական գյուղմթերքների ընդունման կետեր և ինքնարժեքները շատ ցածր են, այդ պատճառով գյուղացիները գյուղմթերք արտադրում են սահմանափակ քանակությամբ և առևտուր իրականացնում են մանրածախով: Այս խնդիրների լուծման արդյունքում գյուղ մթերքների արտադրության բնագավառում կգրանցվեն առավել բարձր ցուցանիշներ:

Համայնքում գործում են ֆերմերային տնտեսություններ, որոնք արտադրում են գյուղմթերքներ (հացահատիկ, կարտոֆիլ, ճակնդեղ, ստեփխին հնդկաձավար, գարի և այլն), և ապահովում արտադրվող մթերքի 50%-ից ավելին:

Այնուհանդերձ Մեղրաշեն գյուղը 2016թվականը եզրափակեց բավականին բարձր ցուցանիշներով՝ համայնքի բյուջեն կատարվել է 110%-ով: Ցորենի միջին բերքատվությունը կազմել է 25-35ց, գարունը 20-25ց: Չնայած այն բանի, որ 2013-2014թթ տեղացած սաստիկ կարկտահարության պատճառած վնասների պատճառով նկատվել էր գյուղատնտեսական ցուցանիշների կտրուկ անկում: Տարիների ընթացքում կատարելագործվում է ավանդական զբաղմունքները՝ կարտոֆիլի, ճակնդեղի և այլ մթերքների արտադրողականության բարձրացում, որը նաև մեծ նպաստ է բերում հարևան համայնքի բնակչության համար աշխատատեղեր ստեղծելով: Այս ցուցանիշների ապահովման գործում մեծ դեր ունեցան նախորդ Կայուն զարգացման ծրագրերում պլանավորած աշխատանքների իրագործումը՝ հակակարկտային կայանների տեղակայումը, փակ խողովակաշարով ներքին ոռոգման ցանցի կառուցումը, խմելու ջրի ջրագծի ներքին համակարգի լիովին փոփոխում, ներքին լուսավորության ցանցի անցկացում և ընդլայնում, աղբավայրի կառուցում, ներհամայնքային ճանապարհների փոսալցումը և հարդեցումը :

Հաշվետվություն

Հողային ֆոնդի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության և սեփականության սուբյեկտների առ 01.07.2016թ)

Աղյուսակ 6

ՀԱ N22												
հողային ֆոնդի առկայության և բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտներ 2016թ.)												
Մարզ				Երրակ			8					
Համայնք				Մեղրաշեն			83					
NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ							
					ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետական	
							ընդամենը (5+6+7)	տրված ամիսատույց օգտագործմամբ	տրված վարձակալության	օգտագործման և վարձակալության չտրված	ընդամենը (9+10+11)	օգտագործման և վարձակալության չտրված
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	11
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		966.13	811.23		154.90		129.70	25.20		
1.2		բազմ տնկարկներ, ընդամենը										
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի										
1.2.2		խաղողի այգի										
1.2.3		այլ բազմամյա										
1.3		խոտհարք										
1.4		արոտ		105.11			105.11			105.11		
1.5		այլ հողատեսքեր		334.89			334.89			334.89		
1			Ընդամենը		1406.13	811.23		594.90		129.70	465.20	
2.1	2. Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		110.79	110.79							
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր		110.67	110.67							
2.1.2		այգեգործական (ամառ-ն)										
2.2		հասարակական կառուցապ.		2.35			0.42			0.42	1.93	1.93
2.3		խաղող կառուցապատման										
2.4		ընդհանուր օգտագործման		14.99			14.99			14.99		
2.5		այլ հողեր		12.74			12.74			12.74		
2		Ընդամենը		140.87	110.79		28.15			28.15	1.93	1.93
3.1	3. Արդյունաբերական, ընդերքային, աղի արտ. նշանակությ. չթ.	արդյունաբերության										
3.2		գյուղատնտեսական, արտադր.		13.89	0.1385		13.7515			13.7515		
3.3		պահեստարանների										
3.4		ընդերք օգտագործման										
3		Ընդամենը		13.89	0.1385		13.7515			13.7515		
4.1	4. Էներգետիկայի, կապի, կոմունալ ենթակ. չթ.	Էներգետիկայի		0.04			0.04			0.04		
4.2		կապի		0.05			0.05			0.05		
4.3		տրանսպորտի		21.77			3.60			3.60	18.17	18.17
4.4		կոմունալ ենթակառուցվածք		0.02			0.02			0.02		
4		Ընդամենը		21.88			3.71			3.71	18.17	18.17
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական										
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ										
5.1.2		արգելավայրեր										
5.1.3		ազգային պարկեր										
5.2		առողջարարական										
5.3		հանգստի										
5.4		պատմական և մշակութային		2.22			2.22			2.22		
5		Ընդամենը		2.22			2.22			2.22		
7.1	7. Անտառային	անտառ										
7.2		թփուտ										
7.3		վարելահող										
7.4		խոտհարք										
7.5		արոտ										
7.6		այլ հողեր										
7		Ընդամենը										
8.1	8. Ջրային	գետեր										
8.2		ջրամբարներ										
8.3		լճեր		0.34			0.34			0.34		
8.4		ջրանցքներ		2.75			2.75			2.75		
8.5		հիդրոտեխ. և ջրամուկ. այլ օբ.										
8		Ընդամենը		3.09			3.09			3.09		
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՒՆԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				1588.08	922.1585		645.8685		129.70	516.1215	20.10	20.10

Անասնապահություն

Ըստ բուծվող տեսակների ստացված արդյունքների վերլուծություն և կանխատեսում

Աղյուսակ 7

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Փաստացի			Կանխատեսվող			
		2014թ	2015	2016	2017	2018	2019	2020
1	Տնտեսությունների թիվը անասուն ունեցող և չունեցող, ընդամենը	360	350	340	355	360	360	360
2	Բացակայող տնտեսությունների թիվը	25	10	10	10	10	10	10
3	Խոշոր եղջերավոր անասուններ ընդամենը	657	746	715	750	755	760	760
4	Խոզեր ընդամենը	73	99	122	130	135	135	135
5	Ոչխարներ բոլոր ցեղերի, ընդամենը	577	624	544	550	555	560	560
6	Այծեր ընդամենը	32	20	20	20	20	20	20
7	Ձիեր, ընդամենը		5	1				
8	Ճագարներ, ընդամենը							
9	Թռչուններ, ընդամենը	2275	2721	2136	2000	2500	2500	2500
10	Սորթատու գազաններ							
11	Մեղվաբնասանիքներ (հատ)	838	898	970	950	1000	1000	1000
12	Ավանակներ	1		1				
13	Ջորիներ							
14	Գոմեշներ							

Ցանքատարածություններ


Ըստ մշակվող կուլտուրաների ստացված արդյունքների վերլուծություն և կանխատեսում

Աղյուսակ 8


Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Փաստացի						Կանխատեսվող			
		2014թ		2015		2016		2017	2018	2019	2020
		/հա/	/գ/	/հա/	/գ/	/հա/	/գ/	հա	հա	հա	հա
1	Աշնանացան ցորեն	560	10.0	567	27	530	35	500	550	560	570
2	Գարնանացան գարի	244	10.0	240	22	250	25	270	280	290	290
3	Հնդկացորեն	0	0			1	10	5	5	6	7
4	Կարտոֆիլ	43	200	40	250	38	270	40	50	55	70
5	Բանջարեղեն	5.5	240	6	280	7	300	7	8	10	11
6	Կերային մշակաբույս	46	26	49	25	48	32	40	45	48	50
7	Տնամերձ այգիներ	12	90	12	147	12	167.5	15	17	18	20

Համայնքի գյուղատնտեսական ցուցանիշների վերլուծությունը ըստ տարիների

1. Անասնապահություն



2. Հողագործություն



Մեղրաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 16 կմ, որից 2.9 կմ ասֆալտապատ է մնացածը ամբողջությամբ գրունտային է: 13 կմ հատվածը ունի վերանորոգման, ասֆալտապատման կարիք:

Համայնքի հաշվեկշռում կա 2 կամուրջ, որոնք երկաթբետոնից են և կառուցված են հեղեղատների հունների վրա:

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում է 230 առանձնատուն, քարակերտ են, թեք տանիքներով, կառուցված են բնակիչների սեփական միջոցներով: Համայնքի բնակարանային ֆոնդում կա գրանցված ուսուցիչների համար նախատեսված բազմաբնակարան 1 շենք, որը գտնվում է սեփականաշնորհման գործընթացում:

Գյուղը գազաֆիկացված է: Նոր թաղամասի գազաֆիկացումը կատարվել է համայնքի բյուջեի միջոցներով: Համայնքում գազաֆիկացման ցանցի վերագործարկման աշխատանքները սկսվել են 1997 թվականից և շարունակվում են մինչև օրս: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ գազամատակարարմամբ ապահովված են համայնքի բոլոր ընտանիքները:

Համայնքում լուծված է փողոցային լուսավորության խնդիրը, համայնքի բյուջեի միջոցներով կատարվել է ընդլայնում ինչը նպաստել է երեկոյան և գիշերային ժամերին այդ փողոցներով երթևեկող՝ վարորդների, բնակիչների առավել անվտանգ և ապահով երթևեկությանը: Նախորդ տարիներին մեծ աշխատանքներ են կատարվել ջրամատակարարման ասպարեզում: Վերանորոգվել է Արթիկ -1 պոմպակայանը, կառուցվել է ներքին ոռոգման ջրատարը փակ խողովակաշարով, կառուցվել է 7 կմ երկարությամբ 530 մմ տրամաչափի փակ խողովակաշարով Կառնուտ- Մեղրաշեն ոռոգման ջրատարը:

Համայնքը խմելու ջուր ստանում է Մանթաշի ջրամբարից փակ խողովակաշարով: Ոռոգման ջուրը ստանում է Մանթաշի ջրամբարից բաց համակրգի միջոցով և Կառնուտի ջրամբարից փակ խողովակաշարով:

Կառուցվել է 5.6 կմ երկարությամբ խմելու ջրի Մանթաշ- Մեղրաշեն ջրատարը, ամբողջովին փոփոխվել և կառուցվել է նոր խմելու ջրի ներքին ցանց, ջրագիծը հասցվել է նորակառույց թաղամաս, արդյունքում լուծվել է բնակչության խմելու և ոռոգման ջրի հարցը: Սակայն ջրամատակարարման հարցը լուծված է մասամբ և դեռ կա մատակարարման որակի գլոբալ խնդիր:

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կենսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է: Համայնքում մի շարք տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը հանրային սննդի կազմակերպման և արտադրական հիմնարկների գործունեության բնագավառում մի կողմից շատ օգտակար է, քանի որ համայնքի շատ բնակիչներ ապահովված են աշխատանքով, մյուս կողմից նրանց շրջակայքը ամենօրյա մաքրման, աղբի հեռացման խնդիր ունի: Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է: Համայնքի բյուջեի միջոցներով կառուցվել է աղբավայր: Յուրաքանչյուր ամսվա 1- ին և 15-ին համայնքի բյուջեի միջոցներով վարձակալվում է աղբահանող մեքենա, և իրականացվում է աղբահանման աշխատանքները:

Փողոցների սանիտարական մաքրման, կենցաղային աղբահանության, տարածքների մաքրման աշխատանքներն իրականացվում են համայնքի բյուջեի միջոցներով: Սակայն սանիտարական մաքրման և աղբահանության ասպարեզում անելիքները դեռևս շատ են: Տնտեսության առջև ծառացել են բազմաթիվ խնդիրներ, որոնց շուտափույթ լուծումը

կօժանդակի աղբահանության աշխատանքների հավուր պատշաճի իրականացմանը: Այդպիսի խնդիրներից են աղբահան մեքենայի ձեռք բերումը , աղբահանություն իրականացնող բանվորների մշտական աշխատանքի ընդունում:

Նախատեսվում է շարունակել այս աշխատանքների կատարումը նաև հաջորդ տարիներին, ավելացնելով աղբահանության ծավալները, մշակելով նոր մեխանիզմներ աղբահանության վարձավճարների գանձման ուղղությամբ, բնակչության շրջանում աշխատանք տանել շրջակա միջավայրի մաքրության և պահպանության ապահովման գործում, բարելավել ծառայությունների մատուցման որակը: Մեղրաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 16 կմ, 2007 թվականներին իրականացվել են համայնքի փողոցների բարեկարգման և ասֆալտապատման ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում ասֆալտապատ ճանապարհը համայնքում կազմում է՝ մոտ 2.9 կմ , մնացածը ամբողջությամբ գրունտային է, որը հարթեցվել և խճալցվել է 2014թ համայնքի բյուջեի միջոցներով: Սակայն շատ են նաև ճանապարհային տնտեսության հետ կապված խնդիրները, 13 կմ հատվածը ունի վերանորոգման, ասֆալտապատման կարիք , իսկ հին ասֆալտապատված տարածքներն էլ ունեն նորացման կարիք: Նշված աշխատանքները պահանջում են զգալի ֆինանսական ներդրումներ: Համայնքի բյուջեի միջոցների հաշվին անհնար է նշված ծրագրերի իրականացումը, ուստի նախատեսվում է որոնել դոնոր կազմակերպություններ նախատեսված ծրագրերը իրականացնելու համար:

Համայնքի հեռախոսակապը իրականացվում է ֆիքսված կապի միջոցով , գործում են նաև «ԲիԼայն», «ՎիվաՍել» և «ՅՈՒ Քոմ» բջջային ցանցերը, ապահովված է ինտերնետ կապով: Համայնքապետարանում աշխատանքները գերատեսչությունների և այլ համագործակցվող կազմակերպությունների հետ իրականացվում են բացառապես էլեկտրոնային տարբերակով: Բացված է «meghrashen.am» էլեկտրոնային կայք էջը , որը մեծ հնարավորություն է ստեղծում ակտիվ շաբանը ազգաբնակչության հետ, ինչպես նաև ապահովում է ՏԻՄ-ի թապանցիկ գործունեությունը: Համայնքում գործում է << Հայփոստ>> -ի մասնաճյուղը իր առանձին շենքով չնայած այն բանի , որ վերջինս չի գտնվում համայնքի գույքի հաշվեկշռում, բայց գտնվում է շատ վատ վիճակում , որտեղ անհնար է մատուցել թապանցիկ, ճիշտ և որակյալ ծառայություններ: :

Բնակչությունը հնարավորություն ունի դիտելու ավելի քան 10 հեռուստաալիք, սակայն բնակչության մեծ մասը օգտվում է արբանյակային ավեհավաքներից:

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բժշկական ամբուլատորիան է, որը տեղակայված է գյուղապետարանի մասնաշենքում: Վերանորոգված է և գտնվում է բարվոք վիճակում, ջեռուցվում է էլեկտրաէներգիայով՝ գյուղապետարանի միջոցներով: Ամբուլատորիան ապահովված է առաջին բուժօնության անհարժեշտ պարագաներով : Աշխատում է 1 բուժ. ֆույր, ժամանակին և բարեխղճորեն անցկացվում են երեխաների բոլոր պատվաստումները: Գյուղապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

1996 թվականին Մեղրաշեն համայնքում ձևավորվեցին տեղական ինքնակառավարման մարմիններ ժողովրդի իշխանություն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով: 2-ի կարելի չնշել այն փաստը, որ Մեղրաշեն համայնքում 1996 թվականից մինչ այսօր անընդմեջ վերընտրվում են նույն տեղական ինքնակառավարման մարմինները , ինչը նպաստել է համայնքի զարգացմանը և կազմված բոլոր ծրագրերի իրագործմանը : 1996

թ-ին ինչպես նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում , այնպես էլ Մեղրաշեն գյուղական համայնքը ապրում էր հետապատերազմյան ճգնաժամ, 90-ականների անիրատեսական սեփականաշնորհումը քայքայել էր տնտեսությունը , բնակիչները կորցրել էին իրենց հավատը դեպի բարեկեցիկ ապագան, յուրաքանչյուր ծրագիր թվում էր անիրականանալի: Կազմվեց առաջին եռամյա ծրագիրը, որտեղ զետեղվեցին համայնքի առջև ծառացած բազմաթիվ խնդիրները կարևորագույնները: Պետք էր շահել բնակչության վստահությունը և հույս ներշնչել դեպի աշխատանքը, համայնքի զարգացումը , որոնք ծրագրերի իրականացման կարևորագույն մասն են կազմում,ինչպես նաև բնակչության համախմբումը և քայլ առ քայլ առաջ մղելու միջոցներ գտնելը:Այնուհետև տարիների ընթացքում համախմբվածությունը, աշխատասիրությունը տվեց իր դրական արդյունքը: 1996-թվականին երազանք թվացող ծրագրերը կարելի է համարել իրականացված:

Մինչև այսօր միայն ու միայն համայնքի զարգացմանը միտված ,պլանավորված ծրագրերը քայլ առ քայլ կատարվել են և ստացել ակնհայտ դրական արդյունք: Այս գործում իրենց բացմառիկ ներդրումներն են ունեցել կառավարությունը և այլ միջազգային դոնոր կազմակերպությունները: Սերտ համագործակցության միջոցով բազմաթիվ անլուծելի թվացող խնդիրներ ստացել են իրենց լուծումները ի նպաստ համայնքի և ազգաբնակչությանը:Սակայն այս ամենի կողքին համայնքն ունի աջակցության և միջամտության կարիք համայնքում առաջնահերթ համարվող ծրագրերի իրականացման գործում:

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում են իրականացնել խոշոր չափերի ծրագրեր որոնք համայնքի զարգացման խնդիրները կլուծեն հիմնովին՝

- 1) պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.
- 2) բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.
- 3) ապահովել համայնքի շինությունների պահպանումը, շահագործումը և բարեկարգումը.
- 4) նպաստել մշակույթի, մարզական և առողջապահական օջախների նորմալ գործունեությանը.
- 5) համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր՝ զարգացնելով փոքր և միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը.
- 6) հատուկ ուշադրություն դարձնել կրթության օջախների նորմալ գործունեությանը.
- 7) միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- 8) բարձրացնել գյուղապետարանի աշխատակազմի և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների կառավարման արդյունավետությունը:
- 9) ներհամայնքային ճանապարհների բարեկարգում տարիների ֆինասական վերլուծությունները և գալիք տարիների կանխատեսումները:

2.4Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում:

Համայնքի տարեկան բյուջեն կազմում է 38000000 դրամ՝,որից 30%-ը բաժին է ընկնում սեփական եկամուտներին: Առաջիկա հինգ տարիներին կատարվելիք ծրագրերը մշակելիս մանրամասնորեն վերլուծվել է նախորդ տարիների բյուջեները՝ եկամուտները, եկամուտների ստաժման աղբյուրները, կազմվել են ծրագրեր լրացուցիչ եկամուտների աղբյուրներ գտնելու վերաբերյալ , ինչպես նաև պարզաբանումներ են կատարվել նպատակային ծեխսերի վերաբերյալ և այս միտումով կանխատեսվել են հինգ տարիների համար պլանավորված ծրագրերի իրականացման համար պահանջվող միջոցները և ստացման աղբյուրները:

	Եկամտի տեսակը	Փաստացի			Կանխատեսվող			
		2014թ	2015թ	2016թ	2017թ	2018թ	2019թ	2020թ
1	Հարկային եկամուտներ ու տուրքեր	4874.7	5082.9	5819.8	5919.4	5990.0	6140.0	6240.0
1.1	Հողի հարկ	3427.7	3405.2	4152.8	3750.9	3800.0	3900.0	3900.0
1.2	Գույքահարկ	1064.0	1439.7	1492.0	1628.5	1650.0	1700.0	1800.0
1.3	Տեղական տուրքեր	383.0	238.0	274.0	540.0	540.0	540.0	540.0
5	Առանց տեղ.տուրքի գանձվող վճարներ	1679.2	1483.9	1730.0	1660.0	1750.0	1800.0	2250.0
6	Համայնքային սեփ. համարվող հողի վարձավճար	1651.5	1495.3	1657.0	1650.0	1650.0	1650.0	1800.0
7	Պաշտոնական տրանսֆերտներ դոտացիա	21345.1	25316.2	25737.3	25380.2	26000.0	26000.0	28000.0
8.	Պետբյուջեից սուբվենցիա	-	1200.0	-	-			
9.	Կապիտալ ներքին դրամաշնորհներ	3400.0	2000.0	-	-			
10	Կապիտալ արտաքին աղբյուրներ				-			
11.	Տեղական վճար	10.0	20.0	10.0	10.0	10.0	10.0	20.0
